«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ»-ի եռամսյակային ամփոփագիր

2022թ. հունվար-մարտ

Հունվարի 20-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի քննարկմանն է ներկայացվել՝
1. ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան հաշվետվությունը,
2. Որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները,
3. ԱԱՏՄ 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
Որոշվել է նախագծի խմբագրված տարբերակը (հաշվի առնելով խորհրդի անդամների առաջարկությունները) երկօրյա ժամկետում ներկայացնել խորհրդին՝ էլեկտրոնային քվեարկության:

Հունվարի 27-ից 30-ը Աղվերանում տեղի ունեցավ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի թիմի աշխատանքային հանդիպումը, որի ընթացքում քննարկվեց տարեկան ռազմավարությունը և հետագա գործողությունների պլանավորումը:



Փետրվարի 17-ին ԻԱԻՄ ՀԿ-ն 2021 թվականի հոկտեմբերի 1-ից ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ իրականացնում է «Ընդլայնել ՄՓԲ բուժման ծածկույթը ՀՀ-ում և ներդնել ՄՓԲ-ի փոխանցման մեխանիզմներ COVID-19-ի ազդեցությունը մեղմելու համար» ծրագիրը:
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում
1. Ստեղծվել է «Նարկոլոգիական հիվանդություններ. արդի մոտեցումները» թեմայով դասընթացի մոդուլ, որը հաստատվել է ԱԱԻ և ԱՆ-ի կողմից:
2. Իրականացվել է ներուժի հզորացման 4 դասընթաց ծրագրում ընդգրկված 12 աութրիչ աշխատակիցների համար
3. Իրականացվել են հանդիպումներ մարզային նարկոլոգիական ծառայություն մատուցող հաստատությունների հետ:

Փետրվարի 25-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ն «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շրջանակներում սույն թվականի փետրվարի 25-ին ներկայացրեց «ՄԻԱՎ-ով ապրող կանանց եվ թմրամիջոցները ներարկային օգտագործող կանանց շրջանում գենդերային բռնության դրսեւորումները ՀՀ-ում» սոցիոլոգիական հետազոտությունը: Ծրագիրն իրականացվեց Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Տարբեր երկրներում, այդ թվում Հայաստանում, մարտի 1-ին նշվում է խտրականության դեմ պայքարի միջազգային օրը՝ կարևորելով մարդու լիարժեք և արդյունավետ կյանքով ապրելու և արժանապատվորեն ու առանց խտրականության ապրելու իրավունքը: Խտրականության դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ, Հոդված 3 ակումբում տեղի է ունեցել «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ նախագահ ժենյա Մայիլյանի և սոցիալական աշխատող Տաթև Նալբանդյանի մամուլի ասուլիս, որտեղ ներկայացվել է, թե կյանքի ո՞ր ոլորտներում են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հանդիպում խտրական վերաբերմունքի, ինչպիսի՞ օրենսդրական խոչընդոտներ կան, ի՞նչ պրակտիկա է գործում Հայաստանում ՄԻԱՎ-ի արդյունավետ հակազդման համար:

Առաքելություն Հայաստան-ի աշխատակիցները մասնակցեցին ՄԻԱՎ և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկող հանդիպմանը՝ ուղղված ՄԻԱՎ-ի դրսևորումների, փոխանցման ուղիների և կանխարգելման միջոցառումներին: Դասընթացը վարեց ժենյա Մայիլյանը:

Մարտի 11-ին Առողջապահության ազգային ինստիտուտում կայացել է ՄԱԿ ՄԻԱՎ/ՁԻԱՀ համատեղ ծրագրի շրջանակում ապակենտրոնացման նպատակով իրականացվող աշխատանքների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ արագ թեստավորման արդյունքների ներկայացմանը նվիրված հանդիպում-քննարկում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:Հանդիպումը ամփոփվեց հարցուպատասխանով:

Մարտի 17-ին ԵՊՀ-ի Սոցիոլոգիայի ֆակուլետի Սոցիալական աշխատանք բաժնի ուսանողների համար կազմակերպված դասընթացի շրջանակներում ժենյա Մայիլյանը ներկայացրել է ՄԻԱՎ-ի մասին ընդհանրական ինֆորմացիա:

Մարտի 18-ին կյանք առանց ցավի ծրագրով փորձագետներն այցելել են Արմավիր քաղաքի ԲԿ և պոլիկլինիկա: Մշտադիտարկման-քննարկմանը ներկա էին տնօրենը և օնկոլոգը, որոնք մասնակցել էին Ծրագրով նախատեսված վերապատրաստման դասընթացներին և միջոցառումներին: Ծրագրի փորձագետներն այցելել են Մրգաշատ գյուղի ամբուլատորիա: Ամբուլատորիան չի տրամադրում պալիատիվ բուժօգնություն: Այն ունի 2 ընտանեկան բժիշկ, սպասարկում է մոտ 5000 բնակչի, որից 5-6-ը օնկոպացիենտներ են:

Մարտի 24-ին Տուբերկուլոզի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ Թոքաբանության ազգային կենտրոնում կազմակերպված միջոցառման ընթացքում ներկայացվել են ԹԱԿ-ի հետ համատեղ 2020-2021թթ իրականացված թվով 4 հետազոտության արդյունքները, խնդիրները, խոչընդոտները և հաջողություններ: Ներկայացվել են նաև ԹՆՕ-ի հետ աշխատանքների առաջարկությունների փաթեթ:

Ներկայացնում ենք «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի (աշխատակիցների) կողմից իրականացված ծառայությունների 2022 հունվար-մարտ ամիսների հաշվետվությունները:



Հավասար խորհրդատուի (ՄԻԱՎ-ով ապրող մարդ) կողմից տրված ծառայություն

Սոցիալական աշխատողի կողմից տրված ծառայություն

Հոգեբանի կողմից տրված ծառայություն

Իրավաբանի կողմից տրված ծառայություն

Փոխօգնության խմբեր



Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ

Հեռ. (098)663383

www.realwrp.org